

ւազին հոտեր, աղբի, թրիքի, թաց շորի, խառնիխուռն նետուած փայտերու, կոտրած սայլերու կմախքներուն, կը դպին ու կը նեղեն, ու աւելի տարօրինակ՝ կը թուին չորնալ, ճերմկելու տեղ խարզելով: Կինե՞րը: Վկայի՛ պէտք կայ այդ բառով որակելու սա ցնորական ձեւերը, որոնք դեփ-դեղին, սեւնալու իսկ անկարող, կուրծքի տեղ փոր միայն կը ցուցադրեն, մանուկով կամ փայծաղով, յղի կամ երկուքով ալ նոյն ատեն, վասնզի մալարիան սանձարձակ է, ճահիճին մէջ իր անհուն ոստայնը ամրապնդած տարիներէ ասդին: Անասելի տգեղութիւն է մեր-կութիւնը իրենց ոտքերուն, որոնք սրունք իսկ չեն կրնար ըլլալ, քանի որ լուերու ծիրտերուն բիծերը գարշազին բանով մը կը կէտկիտեն անոնց շապրնկերները: Դէմքերը երիթացած, դեղինէն դէպի կանանչը գէշ երանգներով, մասամբ ուռեցուորած, մասամբ կաշի դարձած: Մարդ դժուար կը հաւատայ գիրքերէն փառաբանուած «Կապոյտ քոչուկ»ին, սա դժոխքէն փախած ձեւերուն դիմաց: Կի՞ն: Պէտք է հարցնել Տանթէին, թէ ինչո՞ւ իր գիրքին մէջ տեղ չէ տուած Քալապրայի կիներուն:

Մեր տրիբունը շարունակ կը գոցէ, կը ճմուէ ոունգերը ու կը ջննայ զսպել հազը, հետեւանք՝ գարշահոտութեան կճումներուն: Նեղուած է մէզին ու քակորին, սատակ կատուներու, հաւերու, շուներու բազմախառնուրդ բազմաբուրումներէն (Մեծարենց պէտք էր տեսած ըլլար սա պատկերները), ուր իրենց առէջները կը նետեն փողոցներուն վրայ բացուող կոյուղիները, շարունակ քջուջովը հաւերուն օդին մէջ բարձրացնող իրենց հոտերը: Սատակները օրերով կը պառկին տուններուն առջեւ, բանակ-բանակ ճանճեր բզզիւնի հանելով պզտիկներու քարկոծումէն: Ոչ ոք կը մտածէ զանոնք թիով մը նետել աղբակոյտ, ու կը հանդուրժէ այդ գարշահոտութիւնը, մինչեւ որ որդերը յաջողին ծակծկել մուշտակը, փետուրը, դուրս թափեն փորոտիքը, հրաւիրեն ագռաւներու խոնճոյքը: Մնացածը, - այսինքն՝ չորացումը- պարտքն է արեւին: